ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2017 թվականի հունիսի 30-ի N 2- L

Ղեկավարվելով «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 48-րդ կետի 14-րդ ենթակետով և լսելով համալսարանի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ավարտական քննությունների մասին (զեկուցող՝ պրոռեկտոր Միեր Մելիք-Բախշյան),

Գիտական խորհուրդը որոշում է.

1. Մանկավարժական մասնագիտությունների բակալավրի կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման հանրագումարային գնահատականը (իրականացվում է 100 միավորանոց սանդղակով) ձևավորել երկու բաղադրիչներով՝ հետևյալ սկզբունքով.

ա) մանկավարժական պրակտիկաների միջին գնահատական՝ 30 % մասնաբաժին,

բ) ավարտական աշխատանք (ռեֆերատ)՝ 70% մասնաբաժին,

գ) լրացուցիչ մինչև 10 միավոր կարող է հատկացվել կամավորական գործունեության համար:

2. **Հանձնարարել՝**

ա/ ֆակուլտետների դեկաններին և համահամալսարանական ամբիոնների վարիչներին քննարկել «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի շրջանավարտների ավարտական աշխատանքների կազմակերպման և իրականացման» կարգը և ներկայացնել առաջարկություններ ու դիտարկումներ ներկայացված փաստաթղթի վերաբերյալ:

բ/ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Արա Երեմյանին մինչև ս.թ. սեպտեմբերի 1-ը մշակել «Ուսանողների կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» կարգը:

գ/ Ֆակուլտետների խորհուրդներում և ամբիոնների նիստերում քննարկման առարկա դարձնել հանձնաժողովների նախագահների արված առաջարկություններն ու դիտողությունները և համապատասխան միջոցներ ձեռնարկել նկատված թերությունները վերացնելու համար:

3. Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի 2016թ. հուլիսի 6-ի նիստում հաստատված ուսումնական աշխատանքների ծավալների հաշվարկի չափորոշիչների 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

№	Աշխատանքի ձևը	Դասաբաշխման հաշվարկի չափորոշիչները	Ժամաքանակի միավորը	Կատարողը
8.	Ավարտական աշխատանքի ղեկավարում	Յուրաքանչյուր աշխատանքի համար	8, որից	
		ա) ղեկավարին	7	Ղեկավար
		բ) գրախոսին	1	Գրախոս
		Դասախոսը կարող է ղեկավարել մինչև 10 աշխատանք		

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռուբեն Միրզախանյան**